ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԾՁԲ-22/108

ք. Երևան 09 նոյեմբերի 2022թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Ի. Օսիպյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ն. Սիրեկանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետև՝ Կողմեր),կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերը քաղաքաշինական փորձաքննության ենթարկելու նպատակով անձի հետ կնքվող պայմանագրում նախատեսվում

է, որ, շրջարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում ասվը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 1-ին չափաբաժին 5 աշխատանքային, 2-րդ և 3-րդ չափաբաժիններ 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա ծառայության գինը կազմում է 1 700 000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական

ռասպկարգ սուտքագրված լրսելու դեպքում սույս պայմանագրր վճարսաս ժամանակացույցով սառսասված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով 3 (երեք) , 2-րդ չափաբաժնի մասով 1/մեկ/ տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 1-ին չափաբաժնի մասով 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) 2-րդ չափաբաժնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) և 3-րդ չափաբաժնի 0,18 (զրո ամբողջ տասնութ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագիր գրսը գործնայրն է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **է Երևան քաղաքի Կենտրոն, Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	Կատարող
Երևանի քաղաքապետարան	«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	Ք. Գյումրի, Շիրակացի փ. 83շ. բն 40
Կենտրոնական գանձապետարան	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02593108	Հ/Հ 1930030206282300
	ՀՎՀՀ 05547385
Ի. Օսիպյան ----------------------	Ն. Սիրեկանյան ----------------------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 29 » նոյեմբերի 2022 թ. կնքված
ԵՔ-ԳՀՇՁԲ-22/108 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ* ՀՀդրամ

Կենտրոն վարչական շրջանի

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը		Չ/Մ	քանակը	Ընդհանուր գինը ՀՀ դրամ	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	50531140/100	փորձաքննության ծառայություններ	Նախատեսել. 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների փորձաքննության դրական եզրակացության առկայությունը: 2. Յուրաքանչյուր օբյեկտի նախագծային փաթեթի փորձաքննության իրականացման առավելագույն ժամկետը սահմանվում է 5 օրացուցային օր (նախնական եզրակացությունը՝ հայտնաբերված թերություններով): Ժամկետը հաշվարկվում է Պատվիրատուի կողմից Կապալառուին փաթեթի տրամադրման և վերջինիս կողմից աշխատանքները հանձն առնելու վերաբերյալ հաստատման օրվանից, 3.Կապալառուն՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ(ներ)ը ստանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին պետք է ներկայացնի աշխատանքները հանձն առնելու վերաբերյալ հաստատում (էլեկտրոնային փոստով): 4. Կապալառուի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կապալառուն 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը: 5. Նախատեսվում է կատարել Երևանի Կենտրոն վարչական շրջանի 2022թ. ծրագրերով նախատեսվող 10,08 մլն. դրամի շրջանակներում պատվիրվող քաղաքաշինական բնագավառում բնակելի, արտադրական և հասարակական, Էներգետիկ, հիդրոտեխնիկական, կապի, տրանսպորտային ոլորտների ծրագրային նախագծա-նախահաշվային	դրամ	1	1 200 000	ք.Երևան, Տերյան 44	Սույն պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2022թ.

			փաստաթղթերի (**որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից՝ 8 հատ** բակային տարածքների, **27 հատ** թեք տանիքների, **5 հատ** ներբակային աստիճանների, **44 հատ** պատշգամբների, **12 հատ** մայթերի և **5 հատ** հենապատերի շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի) փորձաքննությունները: 6. Կապալառուն պարտավոր է հաշվի առնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջները. 7. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով:					

Աջափնյակ վարչական շրջանի

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)		Տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	քանակը	Ընդհանուր գինը << դրամ	կատարման	
							հասցեն	ժամկետը
2	50531140/97	Նախագծանախա-հաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ	Նախատեսել. 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների փորձաքննության դրական եզրակացության առկայությունը: 2. Յուրաքանչյուր օբյեկտի նախագծային փաթեթի փորձաքննության իրականացման առավելագույն ժամկետը սահմանվում է 5 օրացուցային օր (նախնական եզրակացությունը՝ հայտնաբերված թերություններով): Ժամկետը հաշվարկվում է Պատվիրատուի կողմից Կապալառուին փաթեթի տրամադրման և վերջինիս կողմից աշխատանքները հանձն առնելու վերաբերյալ հաստատման օրվանից, 3. Կապալառուն՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ(ներ)ը ստանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին պետք է ներկայացնի աշխատանքները հանձն առնելու վերաբերյալ հաստատում (էլեկտրոնային փոստով): 4. Կապալառուի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կապալառուն 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը: 5. Նախատեսվում է կատարել Երևանի Աջափնյակ վարչական շրջանի 2022թ. ծրագրերով նախատեսվող շուրջ 3500,0 հազ. դրամի շրջանակներում պատվիրվող քաղաքաշինական բնագավառում բնակելի, արտադրական և հասարակական, էներգետիկ, հիդրոտեխնիկական, կապի, տրանսպորտային ոլորտների ծրագրային նախագծա-նախահաշվային փաստաթղթերի (որոնք կտրամադրվեն): Վճարումները կիրականացվեն հիմք ընդունելով նախագծերի նախահաշվային արժեքների տեսակարար կշիռները և << կառավարության 23.06.2011թ. հ.879-Ն որոշմամբ հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի պարտադիր	դրամ	1	200 000	Ըստ պատվեր-առաջադրանքների	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2022թ. ներառյալ

			փորձաքննության նորմատիվային արժեքները: 6. Կապալառուն պարտավոր է հաշվի առնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջները. 7. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով:					

Դավթաշեն վարչական շրջան

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/<< դրամ	ընդհանուր քանակը	Կատարման	
						հասցեն	Ժամկետը**
3	50531140/98	**Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղամասի 17, 18, 19, 20 շենքերի բակի, Դավթաշեն 1-ին թաղ. 9 շենքի հետնամասի բարեկարգման աշխատանքների, Դավթաշեն 2-րդ թաղամաս 26 շենքի հետնամասի, Դավթաշեն 2-րդ թաղամաս 14, 15 շենքերի հետնամասի բարեկարգման աշխատանքներ, Դավթաշեն 1-ին թաղամաս 13, 14 շենքերի հարևանությամբ բարեկարգման աշխատանքների, Դավթաշեն 4-րդ թաղամաս 30, 31 շենքերի հետնամասի բարեկարգման աշխատանքների, Դավթաշեն 2-րդ թաղամաս 20 շենքի հետնամասի բարեկարգման աշխատանքների;** "Պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրում: Փորձաքննությունն իրականացվում է և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն՝ << օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան: Փորձաքննությունն իրականացնելու համար պատվիրատուի կողմից կներկայացվի •Նախագծային փաստաթղթեր (ընդհանուր բացատրագիր, գլխավոր հատակագիծ, ճարտարապետաշինարարական լուծումներ, ինժեներական սարքավորումներ, ցանցեր և համակարգեր, հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր) • Նախահաշվային փաստաթղթեր (Ամփոփ, օբյեկտային և լոկալ նախահաշիվներ): Տեխնիկական առաջադրանք Առաջադրանքի վերջնական նպատակն է նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների փորձաքննության դրական եզրակացության առկայությունը: Փորձաքննության միջոցով ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված նախագծային լուծումների << օրենսդրությանն ու նորմատիվ	դրամ	300 000	1	Դավթաշեն վարչական շրջանի տարածք	պայմանագիրը ուժի մեջ է մտնում նախագծանախահաշվային աշխատանքների գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից 21-րդ օրացուցային օրը ներառյալ

		փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին համապատասխանության ապահովում : Փորձաքննության միջոցով աշխատանքային նախագծի ներքո մշակված 1. գծագրական մասի և մասնագրերի, 2.նախագծային և նախահաշվային փաստաթղթերով ամրագրված ծավալների միմյանց համապատասխանության ապահովում: Փորձաքննության միջոցով նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով մշակված քաղաքաշինական փաստաթղթերում նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերաբերյալ նախագծային կազմակերպության հետ համատեղ փոփոխությունների, լրացումների, այլընտրանքային լուծումների, լուծման առավել ռացիոնալ տարբերակների քննարկում՝ փորձաքննվող փաստաթղթերի պարտադիր լրամշակման պահանջով: Նախագծողի կողմից օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների ու պայմանների կոպիտ խախտման դեպքում համապատասխան առաջարկությամբ միջնորդագրի ուղղում Պատվիրատուին եզրակացության տրամադրում՝ հետևյալ բովանդակությամբ՝ Փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի՝ 1)նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը և դրանց համառոտ բնութագիրը. 2)ելակետային փաստաթղթերին և օբյեկտի նախագծման տեխնիկական պայմաններին նախագծային լուծումների համապատասխանության վերաբերյալ կատարված եզրահանգումները. 3)հիմնական նախագծային լուծումների վերլուծության արդյունքները, համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները. 4) ընդունված նախագծային լուծումների վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները, նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականները, առաջարկվող ճշտումների հիմնավորումները՝ պարտադիր հղում կատարելով այն նորմին, որի խախտումն արձանագրվել է. 5)փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով կատարված հիմնական փոփոխությունները և լրացումները. 6)քաղաքաշինական փաստաթուղթը երաշխավորելու կամ այն լրամշակման վերադարձնելու կամ այն մերժելու մասին որոշման հիմնավորումները: Փորձագիտական մարմնի դիտողություններն ու առաջարկությունները կարող են ներկայացվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների ապահովման մասով: Բացի այդ, հետևյալ ձևակերպումները՝ 1.Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան, 2.Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին, 3.Նախագիծը երաշխավորվում է դրական եզրակացությամբ՝ հազ.դրամ նախահաշվային արժեքով, 4.Փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ցանկը: Փորձագիտական դրական եզրակացությունը չի կարող պարունակել նախագծային լուծումների վերաբերյալ դիտողություններ, առաջարկություններ կամ նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականներ: Ամփոփիչ ձևակերպում.					

		1. «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, կամ 2. «Նախագիծը վերադարձվում է լրամշակման, կամ 3.«Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական պահանջներին Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով: Վճարումները կիրականացվեն հիմք ընդունելով նախագծերի նախահաշվային արժեքների տեսակարար կշիռները և ՀՀ կառավարության 23.06.2011թ. հ.879-Ն որոշմամբ հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի պարտադիր փորձաքննության նորմատիվային արժեքները: Կապալառուն պարտավոր է հաշվի առնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջները: Անհրաժեշտության դեպքում իրականացնել կրկնակի փորձաքննություն:"					

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
Ք. Գյումրի, Շիրակացի փ. 83շ. բն 40
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030206282300
ՀՎՀՀ 05547385

Ն. Սիրեկանյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 04 » նոյեմբերի 2022 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-22/108 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																	
				դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ՀՀ	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531140/99	Կենտրոն վարչական շրջանի նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության ծառայությունների	900012213576	:	:	:	:	:	:	:	:	:	:	1200000	1200000	1200000
2	50531140/97	Աջափնյակ վարչական շրջանի նախագծանախա-հաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ	900052473312	:	:	:	:	:	:	:	:	:	:	200000	200000	200000
3	50531140/98	Դավթաշեն վարչական շրջանի նախագծանախա-հաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ	900052476244	:	:	:	:	:	:	:	:	:	:	300000	300000	300000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող
«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
Ք. Գյումրի, Շիրակացի փ. 83շ. բն 40
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030206282300
ՀՎՀՀ 05547385

Ն. Սիրեկանյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » նոյեմբերի 2022 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-22/108 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » նոյեմբերի 2022 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-22/108 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀՀ դրամով, ներբանկային և/կամ Bank Mail համակարգով կատարվող փոխանցումների համար՝

PAYMENT ORDER. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

DATE.ԱՄՍԱԹԻՎ _07/11/22_____

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐԸ DOC.NUMBER	007005	ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ VALUE DATE	
50:	ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	1930030206282300	
	ՎՃԱՐՈՂ ORDERING CUSTOMER	ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ ՀՎՀՀ 05547385 Սոցիալական քարտ	
52	ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿ ORDERING CUSTOMER'S BANK	,Կոնվերս Բանկ ՓԲԸ	
32:	ԳՈՒՄԱՐԸ (թվերով և/կամ բառերով) AMOUNT	255,600.00 AMD	
	ԱՐԺՈՒՅԹԸ (բառերով կամ կոդով) CURRENCY Ոսկու դեպքում՝ գրամով Grams if gold	Երկու հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր դրամ	
57:	ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿ ACCOUNT WITH INSTITUTION	ՀՀ ԿԲ գործ.վարչություն /ՀՀ ֆինանս.նախ.	
59:	ՇԱՀԱՌՈՒՆ BENEFICIARY	Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձեւով,ՀՀ ֆինանսների նախարարություն	
	ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	900008000698	
70	ԳՈՐԾԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ PAYMENT DETAILS	ԵՔ-ԳՀԾՁԲ-22/108 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովում	
71A	ԾԱԽՍԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ DETAILS OF CHARGES *		

ACCOUNT HOLDER Seal SIGNATURE

ՀԱՇՎԵՏԵՐ Կ.S. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ AUTHORISED PERSON'S SIGNATURE	
ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ (դրույքը և/կամ գումարը) COMMISSION (rate and/or amount)	100.00 Հայկական դրամ

Կոնվերս Բանկ ՓԲԸ
Converse Bank CJSC
ՊԿ/ID 374
07 NOV 2022
Հաստատվում է
Approved
Ռոզաննա Սարգսյան
Rozanna Sarkisova

*Կիրառելի է արտարժույթով փոխանցումների դեպքում

ConverseBank	*«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ընթացիկ և Խնայողական հաշիվների բացման և վարման կարգ*	PR 72-01		
	Հավելված 9 Վճարման հանձնարարագրի օրինակելի ձև	*Ամսաթիվ 22.05.17թ.*	*Խմբագրություն 12*	*1/ 75*

ՀՀ դրամով, ներբանկային և/կամ Bank Mail համակարգով կատարվող փոխանցումների համար՝
PAYMENT ORDER. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

DATE.ԱՄՍԱԹԻՎ _07/11/22_______________

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐԸ DOC.NUMBER		007005	ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ VALUE DATE
50:	ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	193003020628230	
	ՎՃԱՐՈՂ ORDERING CUSTOMER	Ա Ր Խ Ի Տ Ե Կ Տ Ս Պ Ը ՀՎՀՀ 05547385 Սոցիալական քարտ	
52	ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿ ORDERING CUSTOMER'S BANK	,Կոնվերս Բանկ ՓԲԸ	
32:	ԳՈՒՄԱՐԸ (թվերով և/կամ բառերով) AMOUNT	170,400.00 AMD	
	ԱՐԺՈՒՅԹԸ (բառերով կամ կոդով) CURRENCY Ոսկու դեպքում՝ գրամով Grams if gold	Մ ե կ հ ա ր յ ո ւ ր յ ո թ ա ն ա ս ո ւ ն հ ա զ ա ր չ ո ր ս հ ա ր յ ո ւ ր դ ր ա մ	
57:	ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿ ACCOUNT WITH INSTITUTION	Հ Հ Կ Բ գ ո ր ծ . վ ա ր չ ո ւ թ յ ո ւ ն /Հ Հ ֆ ի ն ա ն ս . ն ա խ .	
59:	ՇԱՀԱՌՈՒՆ BENEFICIARY	Հ ա յ տ ի և պ ա յ մ ա ն ա գ ր ի ա պ ա հ ո վ ո ւ մ ը բ ա ն կ ա յ ի ն ե ր ա շ խ ի ք ո վ կ ա մ կ ա ն խ ի կ փ ո ղ ի ձ և ո վ	
	ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	900008000664	
70	ԳՈՐԾԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ PAYMENT DETAILS	Ե Ք -Գ Հ Ծ Ձ Բ -22/108 Ծ Ա Ծ Կ Ա Գ Ր Ո Վ Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ր Ի Ա Պ Ա Հ Ո Վ Ո Ւ Մ	
71A	ԾԱԽՍԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ DETAILS OF CHARGES *		

ACCOUNT HOLDER ՀԱՇՎԵՏԵՐ	Seal Կ.Տ.	SIGNATURE ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ AUTHORISED PERSON'S SIGNATURE	
ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ (դրույքը և/կամ գումարը) COMMISSION (rate and/or amount)	100.00 Հ ա յ կ ա կ ա ն դ ր ա մ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Converse Bank CJSC ՊԿ/ID 374 07 NOV 2022 Documented Ռուզաննա Սարգսովա

* Կիրառելի է արտարժույթով փոխանցումների դեպքում